ՍԵՎԱԿ ՍԱՍՈՒՆԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Ծնվել է 1993 թվականի մայիսի 1-ին Հրազդան քաղաքում:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2000-2010 թթ. սովորել եւ ավարտել է Հայաստանի Անանիա Ծիրակացու անվան թիվ 6 միջնակարգ դպրոցը:

2010-2014 թթ. սովորել եւ ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական ֆակուլտետի «Ապահովագրական գործ» բաժինը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2015 թվականից «Քաղաքացիական պայմանագիր » կուսակցության Հրազդանի տարածքային կառույցի ղեկավարն է:

2017-2018 թթ. աշխատել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Երեւանի մասնաճյուղում որպես ճարտարագետ:

2018 թվականի հոտեմբերի 27-ին ստանձնել է Հրազդան համայնքի ղեկավարի պաշտոնը:

Ամուսնացած չէ:

ԱՊԱԳԱ ԿԱ ՀՐԱԶԴԱՆ

Պատվիրատու՝ ՔՊԿ: Պատվեր՝ 3399: Տպաքանակ՝ 24000:
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում

Հրազդան համայնքի սիրելի՛ բնակիչներ, հարգելի՛ հայրենակիցներ,

2018 թվականի հոկտեմբերի 21-ին ստանալով ձեր վստահության քվեն՝ Հրազդան համայնքի պատմության մեջ բացեցինք մի նոր էջ՝ իրականացնելով անհնարին թվացող բազմաբնույթ ծրագրեր: Պաշտոնավարման ընթացքում մշտապես գործել եմ բաց եւ թափանցիկ՝ պահպանելով բնակիչ եւ համայնքի ղեկավար անմիջական կապը: Վերջին երեք տարիներին համայնքային տարբեր ոլորտներում իրականացված մեծածավալ աշխատանքների արդյունքները փաստում են, որ ձեզ տրված յուրաքանչյուր խոստում իրականություն է դառնում: Ձեզնից յուրաքանչյուրի վստահությունն ինձ համար մշտապես վեր է եղել ամեն ինչից, մշտապես ուշադիր եմ եղել ձեր կողմից բարձրացված խնդիրներին եւ երբեք որեւէ խնդիր չեմ անտեսել:

Մեր քաղաքում բացերն ու խնդիրները դեռեւս բազմաթիվ են, քանի որ տարիներ շարունակ համայնքային միջոցները չեն ուղղվել Հրազդանի զարգացմանը: Չնայած առկա խնդիրներին՝ մենք չենք հուսահատվել եւ հնարավոր բոլոր միջոցները գործի ենք դրել ի բարօրություն մեր քաղաքի: Համայնքային գրեթե բոլոր ոլորտներն այս տարիների ընթացքում առաջընթաց եւ զարգացում են ապրել, բոլորիս աչքի առաջ իրականացվել են լայնածավալ աշխատանքներ, որ չէին կատարվել երկար տարիներ:

Սիրելի՛ համաքաղաքացիներ, ինձ համար Հրազդանը զարգացնելը գերխնդիր է, եւ
վստահ եմ, որ միասնական ուժերով կարող ենք այն դարձնել մեր երկրի զարգացած եւ ժամանակակից քաղաքներից մեկը: Դեկտեմբերի 5-ին սպասվող համայնքային խոշորացման արդյունքում մեզ միացող նոր բնակավայրերը եւս ինտենսիվ կերպով զարգացում են ապրելու եւ ներգրավվելու են բարեկարգման աշխատանքներին:

Սիրելի՛ հայրենակիցներ, երեք տարի շարունակ մենք միասին անցել ենք դժվարին ու պատասխանատու ճանապարհ, եւ այդ ճանապարհը եկեք շարունակենք միասին, ինչի համար հայցում եմ ձեր քվեն: Այս ընթացքում արդեն իսկ կատարված բազմաթիվ աշխատանքներն ու ծրագրերը պետք է լինեն շարունակական եւ համալրվեն նորերով: Այս հավատով եմ ձեզ ներկայացնում բարեկեցիկ, զարգացող եւ օր օրի առաջընթաց ապրող Հրազդան ունենալու իմ ծրագրերն ու հետագա քայլերը:

Սիրելի՛ հրազդանցիներ, ես ձեզնից մեկն եմ եւ մշտապես ձեր կողքին եմ: Եկեք միասին շարունակենք զարգացնել եւ շենացնել մեր քաղաքը:

ԱՊԱԳԱ ԿԱ ՀՐԱԶԴԱՆ

ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5
Տեղական Ինքնակառավարման Մարմինների
Ընտրություններ 2021թ

ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՆՔ ԻՐԱԿԱՆԱՑԱՆԵԼ

- Ներհամայնքային գլխավոր եւ երկրորդային նշանակություն ունեցող ճանապարհների ու մայթերի հիմնանորոգումը,
- Բազմաբնակարան շենքերի բակային տարածքների լայնամասշտաբ ասֆալտապատումը,
- Համայնքում նոր եւ ժամանակակից խաղահրապարակների կառուցումը,
- Ընդլայնել եւ արդիականացնել Հրազդան համայնքի բոլոր թաղամասերի եւ բազմաբնակարան շենքերի բակերի արտաքին լուսավորության համակարգը էներգախնայող «լեդ» լուսատուներով,
- Նախակրթական ուսումնական հաստատությունների հիմնանորոգումը եւ ապահովումը լոկալ ջեռուցման համակարգով,
- Հանրային տրանսպորտի համար նախատեսված նոր եւ ժամանակակից կանգառասրահների ավելացումը,
- Մշակութային հաստատությունների՝ արվեստի եւ երաժշտական դպրոցների, գրադարանների, ինչպես նաեւ մարզական դպրոցների շենքային պայմանների բարելավումը,
- Համայնքային սեփականություն հանդիսացող հաստատությունների ապահովումը արեւային կայաններով,
- Աջակցել համատիրություններին բազմաբնակարան շենքերի տանիքների եւ շքամուտքերի բարեկարգման գործում,
- Աջակցել զոհվածների հարազատներին, անապահով ընտանիքներին, տարեցներին եւ հաշմանդամություն ունեցող անձանց:
- Հիմնանորոգելու եւ բարեկարգելու ենք համայնքային ենթակայության գերեզմանատներ տանող ճանապարհները:
- Կառուցելու ենք մոդուլային մանկապարտեզ, որով կապահովվի երեխաների հաճախելիության թիվը:
- Ապահովելու ենք ներհամայնքային երթուղիների կանոնակարգված սպասարկումը՝ ավելացնելով նոր տրանսպորտային միջոցներ եւ երթուղիներ:
- Համայնքային հասարակական նշանակություն ունեցող շինություններում մատչելիությունը ապահովելու համար կառուցելու ենք թեքահարթակներ:
- Համայնքում պարբերաբար իրականացնելու ենք ծառատունկ եւ ավելացնելու ենք կանաչապատ տարածքներ:
- Հանգստի եւ ժամանցի կազմակերպման նպատակով նախատեսում ենք կառուցել նոր եւ ժամանակակից զբոսայգի:
- Վերջին երեք տարիների ընթացքում վերագործարկված եւ բարեկարգված զբոսայգիները կհամալրվեն ժամանակակից ատրակցիոններով եւ համապատասխան պարագաներով:
- Տեղադրելու ենք տեղեկատվական վահանակներ, որոնց միջոցով կտրամադրվի համայնքի պատմամշակութային կոթողների եւ տեսարժան վայրերի վերաբերյալ տեղեկատվություն:
- Խրախուսելու ենք մասնավոր հատվածի մասնակցությունը զբոսաշրջության ոլորտում:
- Համայնքում զարգացնելու ենք բոլոր մարզաձեւերը եւ այդպիսով խրախուսելու ենք առողջ ապրելակերպի գաղափարը եւ ֆիզիկական դաստիարակությունը:
- Նպաստելու ենք թիավարության բայդարկա եւ կանոե օլիմպիական մրցաձեւերի զարգացմանը:
- Կատարելու ենք ոռոգման ցանցի կառուցման եւ ընդլայնման աշխատանքներ:
- Ըստ անհարաժեշտության կառուցվելու են ջրընդունիչ հեղեղատար ցանցեր:
- Կոմունալ տնտեսության եւ աղբահանության աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով համայնքային ենթակայության ավտոպարկը համալրելու ենք հատուկ տեխնիկաներով:
- Վերագործարկելու ենք համայնքում բազմաբնակարան շենքերի՝ այս պահին չգործող բոլոր 36 վերելակները:
- Օժանդակելու ենք գյուղատնտեսական նոր տեխնոլոգիաների ներդրմանը, ինչը կխթանի ոլորտում աշխատանքների արդյունավետ իրականացումը:
- Վերհանելու ենք խոշորացման արդյունքում Հրազդան քաղաքին միացող գյուղական համայնքներում առկա խնդիրները եւ սեղմ ժամկետներում ըստ առաջնահերթության տալու ենք դրական լուծումներ:

ԱՊԱԳԱ ԿԱ
ՀՐԱԶԴԱՆ